Այսպիսով, Հայաստանում մ.թ.ա. VI-IVդդ. վերաբերող կնիքները ի հայտ են բերում հնագույն արտադրամշակութային ավանդների՝ նախորդ շրջանի արվեստում առկա հարուստ թեմատիկայի, քարի ու բրոնզի վրա փորագրման ասպարեզում կուտակված մեծ փորձի ժառանգում: Մյուս կողմից դրսևորում են կնիքների ձևերի, թեմատիկայի մեջ այն նորը, որը գալիս էր ընդհանուր ժամանակագրական և աշխարհագրական միջավայրից: Կնիքները հաստատում են Հայաստանի ավանդական կապերը փոքրասիական երկրների և Իրանի հետ, որոնք կային դեռևս հնագույն ժամանակներից (63ա, էջ 104-105):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերջին տասնամյակների պարբերական պեղումների, ուսումնասիրությունների և տարբեր ուղիներով կուտակված նյութերի ոճաբանական քննությունը, մանրակրկիտ համեմատությունը առաջավորասիական մյուս երկրների, Անդրկովկասի և Կովկասի, հյուսիսսևծովյան հունական քաղաքների համաժամանակյա մշակույթների հետ, թույլ են տալիս կատարելու մի շարք ընդհանրացնող եզրակացություններ Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթի բնույթի, երկրի տնտեսական կյանքի, հարևան երկրների հետ ունեցած կապերի վերաբերյալ:

Այս ժամանակագրական հատվածի մշակույթը հիմնականում պահպանում է ավելի վաղ դարաշրջաններից ծագող հատկանիշներ: Մյուս կողմից մշակույթը նշանավորվում է մի շարք նոր տարրերի երևան գալով՝ հատկապես խեցեղենի, զենքի մեջ: Երկաթը, որը նախորդ ժամանակաշրջանում կատարյալ հաղթանակ էր տարել բրոնզի նկատմամբ, շարունակում էր իր հաղթարշավը, բրոնզին թողնելով զրահների, զարդեղենի պատրաստումը միայն: Երկաթե արտադրանքի նախատիպերը այլևս բրոնզե չեն: Հանդես է գալիս նոր տիպի խեցեղեն ոչ միայն ձևով, այլև որակով:

Կատարվում են շատ ձևերի միասնացում, հատկապես երկաթի իրերի, որոնք տարածվում են երկրով մեկ: Ուստի, մշակույթը, նախորդ դարերի համեմատ, ավելի միատարր է. նախորդ դարաշրջանում իրար կողքի գոյակցող ուրարտական և տեղական ցեղերի մշակույթների փոխարեն հանդես է գալիս մեկ ամբողջական, միատարր մշակույթ, որն էլ ապացույց է այդ մշակույթը կրող ժողովրդի միատարրության: Միաժամանակ չի բացառվում ներմշակութային բազմազանություն՝ կապված կա՛մ հնագույն ավանդների, կա՛մ քննարկվող դարաշրջանի պատմական իրադրության առանձնահատկությունների հետ: Ինչպես նշվեց, ուրարտական պետության սահմաններում ընդգրկված շրջանների (Արարատյան դաշտավայր, մերձսևանյան շրջաններ, Շիրակ և այլն), մշակույթներում պահպանվում, շարունակվում են ուրարտական մշակութային ավանդների, իսկ հյուսիսային, հյուսիս-արևելյան, հարավային շրջաններում՝ մ.թ.ա. VII-VIդդ. տեղական մշակույթին բնորոշ տարրերը: Մյուս կողմից՝ ընդգրկված լինելով աքեմենյան պետության կազմի մեջ, Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթը ներառում է նաև ժամանակի համար առաջավոր այդ մշակույթի որոշ տարրեր: Թեև չպետք է մոռանալ հայկական ու իրանական մշակույթների ընդհանուր առաջավորասիական ակունքները, հատկապես ուրարտական, որոնք պայմանավորում են երկու մշակույթների որոշ ընդհանրությունները:

Այսպիսով, մ.թ.ա. VI-IVդդ. Հայաստանի բնակչությունը շարունակում է ապրել հնուց ի վեր բնակեցված իրենց հողերի վրա, նյութական մշակույթի տարբեր բնագավառներում պահպանելով իր մշակութային ավանդները: Այս հանգամանքը թույլ չի տալիս տեսնել որևէ խզում ժողովրդի մշակույթի ընթացքում և փնտրել «այլ մշակույթ»:

Մշակույթի անընդմեջ զարգացումը լավ նկատվում է հատկապես այն դամբարանադաշտերի նյութերի հիման վրա, որոնք գոյություն են ունեցել I հազարամյակի սկզբներից (Աստղի բլուր, Կարճաղբյուր, Կարմիր վանք, Ջուջևան, Բերդատեղ, Ռեղկին լագեր, Որնակ և այլն): Այս դամբարանադաշտերի մ.թ.ա. VI-IVդդ. թվագրվող թաղումները, դամբարանների ճարտարապետական կառուցվածքով, թաղման ծեսով և այն ուղեկցող արարողություններով, չեն տարբերվում դամբարանների վաղ խմբերից: Լայնորեն օգտագործվում են դամբարանները շրջափակող կրոմլեխները, դամբանաթմբերը, թեև տեղի է ունենում թաղման կառույցների որոշ պարզեցում. բարդ, շքեղ թաղման խուցեր, ինչպիսիք կային նախորդ դարերում, չեն հանդի-

պում: Թաղման ծեսում ևս շարունակվում են հին ավանդները՝ դիաթաղում և դիակիզում:

Դիաթաղումը կատարվում է հիմնականում կծկված, կողի վրա, թեև հանդիպում են թաղումներ՝ նստած դիրքով, բայց միայն կոլեկտիվ թաղումների ժամանակ (Աթարբեկյան), ընդգծելով թաղվողների տարբեր սոցիալական վիճակը: Նորություն չէ Հայաստանի համար և դիակիզումը, որը լավ հայտնի է մ.թ.ա. II հազարամյակից սկսած: Բացի անհատականից, հանդիպում են ընտանեկան և կոլեկտիվ թաղումներ: Շարունակվում է ընդհանրությունը և թաղման դիրքորոշումներում, որտեղ գերակշռում է երկրի կողմերի նկատմամբ խառը կողմնորոշումը, նույնիսկ միևնույն դամբարանադաշտում: Այս ամենը վկայում է նաև գաղափարական հիմքի ընդհանրություն: Մշակութային ժառանգությունը ոչ պակաս պարզորոշ ի հայտ է գալիս նաև բնակավայրերի ուսումնասիրության ժամանակ: Բնակավայրերի մի մասում կյանքը սկիզբ է առնում մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից և շարունակվում մինչև VI-IVդդ.: Բնակավայրերի մի խումբը հիմնադրվում է մ.թ.ա. VII-VI դդ. և գոյատևում մինչև միջնադար (Սուրբ Նահատակ, Բերդաքար) ներառյալ քննարկվող ժամանակաշրջանը: Եվ վերջապես, մ.թ.ա. VI-IVդդ. ստեղծվում են մի շարք նոր բնակավայրեր, սակայն հատակագծման, շինարարական տեխնիկայի տվյալներով դրանք չեն տարբերվում նախորդ դարերի բնակավայրերից և միատիպ են, չհաշված յուրաքանչյուր բնակավայրի պաշտպանական համակարգում առանձին առանձնահատկությունները, որոնք թելադրվում են տեղանքի պայմաններից: Քննարկվող բնակավայրերում ժամանակագրական տարբերությունները հանդես են գալիս միայն նյութական մշակույթի, հատկապես խեցեղենի, մետաղյա գործիքների, որոշ զարդերի քննության ժամանակ երևան եկող նոր տարրերի միջոցով: Մ.թ.ա. VI-IVդդ., ինչպես նաև նախորդ դարաշրջանի բնակավայրերը, բավարար չափով տարանջատվում են և տարբերվում են իրենց չափերով, նշանակությամբ ու ներքին կառուցողական բնույթով:

Հնավայրերի, հատկապես բնակավայրերի պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացություններ անել նաև մ.թ.ա. VI-IVդդ. Հայաստանի տնտեսության մասին: Քննությունը հաստատում է, որ տնտեսության հիմնական ճյուղերն էին երկրագործությունը, անասնապահությունը և արհեստագործությունը, որոնք զարգանում էին անխզելի, փոխադարձ կապվածության պայմաններում:

Առանձնապես լավ է փաստագրվում երկրագործությունը՝ պեղումների ժամանակ գտնված բազմաթիվ գործիքներով, հացահատիկը պահելու հորերով, կարասներով, աղորիքներով, սանդերով, որոնք համալրվում են պատմական աղբյուրներով: Քսենոփոնը նկարագրում է Հայաստանի բարեկեցիկ վիճակը, պաշարներով լեցուն գյուղերը, հիշատակելով ցորենի, գարու տեսակները, գարուց պատրաստված խմիչքը, չամիչը, ընդեղենը (65, IV, IV, 7, IV, IV, 9, IV, V, 5): Անուշահոտ գինիները, չամիչը, ընդեղենը, դառը նշի և բևեկնի յուղերը ապացույց են զարգացող այգեգործության, դրանցից ստացված արդյունքների մշակման բարձր մակարդակ: Նշանակալից է տեխնիկական կուլտուրայի՝ քունջութի մշակման փաստը, որը վկայված է դեռևս ուրարտական ժամանակաշրջանից և որի գոյությունն առանց ոռոգման համակարգի անհնար է: Հետևապես կարելի է ենթադրել, որ ուրարտական պետության անկումից հետո ոչ բոլոր ոռոգման համակարգերն էին ոչնչացել: Ջրանցքները շարունակում էին գործել կամ վերականգնվել էին:

Նախալեռնային և լեռնային շրջանների արոտավայրերի առատությունը, երկրի միասնականությամբ (թեկուզ սատրապության պայմաններում) պայմանավորված ապահովությունը, հնարավորություն էին ստեղծում անասնապահության զարգացման համար: Հերոդոտը հայերին անվանում է անասուններով հարուստ (44, V, 49): Քսենոփոնը թվարկում է պահվող անասունների տեսակները՝ կով, ոչխար, այծ, եզ, ձի, խոզ, ընտանի թռչուններ, բուծվող հատուկ տեսակի ձիեր (65, IV,V, 25): Մանր և խոշոր եղջերավոր անասունների մեծ քանակություն է հիշատակվում ուրարտական, ասորեստանյան արձանագրություններում, որը ավարառվում էր Հայկական լեռնաշխարհի բոլոր շրջաններից: Հնագիտական պեղումները հաստատում են գրավոր աղբյուրների վկայությունները, ընձեռելով փաստեր, նախ ոսկրաբանական, ապա անասնապահական մթերքների վերամշակման հետ կապված իրեղեն նյութերով (ձձումներ, կաշին մշակելու դանակներ, բուրդը մանող թեշիկի գլխիկներ, թելը մաքրելու գործիքներ, մանածագործության աղզգահի կախիկներ, կտուտիչներ և այլն):

Փաստեր են ձեռք բերվել ձկնորսության, որսորդության առկայության մասին: Երկրագործության և անասնապահության զարգացման բարձր մակարդակը պայմանավորում էր ար-

հեստների զարգացումը երկրում: Առանձին գլուխներում քննարկվեցին խեցեգործության, մետաղագործության, զարդագործության արտադրանքները, որոնք իրենց որակով հետ չէին մնում ժամանակի զարգացման մակարդակից: Հատկապես ընդգծելի է մետաղամշակման բարձր աստիճանը, որը բացահայտվեց այդ արտադրանքի մետաղագրական ուսումնասիրության շնորհիվ: Հետևաբար արհեստները գտնվում էին մասնագիտացված արհեստավորների ձեռքում:

Արհեստագործական արտադրանքի նույնական ձևերը, որոնք հանդիպում են երկրով մեկ, թույլ են տալիս խոսելու զարգացող առևտրական կապերի մասին: Այդ կապերը հավանաբար իրականացվում էին նախ փոխանակային, ապա ավելի ուշ՝ առևտրի ձևով: Բնորոշ է, որ փոխանակության մեջ էին հիմնականում շարքային առարկաները՝ զենք, զրահ, խեցեղենի որոշ տեսակներ, զարդեր: Կապերի ինտենսիվությունը արտահայտված է ոչ այնքան ներմուծված առարկաների առկայությամբ, որքան դրանց հաճախ հանդիպող կրկնօրինակությամբ, որն անկասկած իրականացվում է տեղական արհեստանոցներում: Այս երևույթը վկայում է փոխանակության ավելի բարդ ձևերի, այդ թվում, հատկապես տեխնոլոգիական ինֆորմացիայի փոխանակության մասին:

Մյուս կողմից, որոշ տվյալներ կան նաև մ.թ.ա. VI-IVդդ., թեև թույլ զարգացած, դրամական շրջանառության վերաբերյալ: Այդ երևույթի իրեղեն ապացույցներ են աքեմենյան սիկղը, գտնված նախկին Երևանի նահանգում, Ասիսանի մ.թ.ա. VI-IVդդ. ատտիկյան չորեքդրամյանը և էրեբունիում հայտնաբերված V դարով թվագրվող միլեթյան դրամները, թեև վերջիններս ավելի շուտ նվիրատվություն են եղել տաճարին: Հայաստանի արևմտյան մասերը այդ դարերում ընդգրկված էին աքեմենյան առևտրի ոլորտը և ավանդական առևտրական ուղիներով կապված էին Միջագետքի և փոքրասիական շուկաների հետ (52, էջ 1-16): Առևտրական կապերի լրացուցիչ վկայություն է Հերոդոտի հաղորդումը Հայաստանից գինի արտահանելու մասին (44, I, 194): Այս տվյալները, համապատասխան գլուխներում քննարկված բազմաթիվ նյութերը, Իրանի, Փոքր Ասիայի, միջերկրածովյան, անդրկովկասյան երկրների մշակույթների հետ ունեցած կապի վկայություն են:

Այսպիսով, Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. նյութական մշակույթը հանդիսանում է Հայկական լեռնաշխարհում դարերի ընթացքում ձևավորված և զարգացման երկար ճանապարհ անցած մշակույթի հերթական շրջափուլ և տեղական ավանդների, առաջավորասիական քաղաքակրթությունների հետ ունեցած շփումների բարդ սինթեզի արդյունք: